ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿ

«Շտիգեն» ՍՊԸ գործունեության էական փաստերի վերաբերյալ՝ 2026թ. հունիսի 30-ի դրությամբ

2025թ. հուլիսի 1-ից արևային ոլորտում պետական խթանող քաղաքականության ժամանակավոր դադարեցումը, մի կողմից, և «Մասրիկ-1» ծրագրի գլխավոր կապալառու «Չայնա-Արմենիա Էնջիներինգ» ՍՊԸ-ի կողմից վճարման ուշացումը, մյուս կողմից, հանգեցրել են «Շտիգեն» ՍՊԸ (այսուհետ՝ «Ընկերություն») հասույթների և շրջանառու կապիտալի էական կրճատմանը: Ստեղծված իրավիճակում Ընկերությունը մշակել է հակաճգնաժամային ծրագիր, որը հետևողականորեն իրագործվում է:

Ա. Ֆինանսատնտեսական կայունացում

1. Պարտավորությունների մարման նպատակով իրացվել են ցածր եկամտաբեր ակտիվները: Մասնավորապես՝ վաճառվել են Ընկերությանը պատկանող արևային կայաններում և «Էներէքս» ՓԲԸ-ում փայաբաժինները:
2. Արդյունավետության բարձրացման նպատակով վերանայվել են Ընկերության կառավարման մոդելը և բիզնես գործընթացները, ինչը թույլ է տվել էապես կրճատել հաստատուն ծախսերը և բարձրացնել գործառնական եկամտաբերությունը:
3. 2026թ. մայիսի 12-ին դատարանը հաստատել է «Մասրիկ-1» ծրագրի գլխավոր կապալառու «Չայնա-Արմենիա Էնջիներինգ» ՍՊԸ-ի հետ հաշտության համաձայնագիրը, որի ենթակապալառուն էր Ընկերությունը: Համաձայնագրի ընդհանուր գումարը կազմում է 149 մլն դրամ, որից Ընկերությունն արդեն ստացել է 99,5 մլն դրամ, իսկ մնացած 49,5 մլն դրամը կստանա մինչև 2026թ. օգոստոսի վերջ:

Բ. Էական ծրագրեր և պայմանագրեր

4. 2025թ. վերջին Ընկերությունը՝ որպես ենթակապալառու, ձեռնամուխ է եղել Վրաստանի Ռուսթավի քաղաքում 23,9 ՄՎտ հզորությամբ արևային կայանի նախագծման և շինարարական աշխատանքներին, որոնք նախատեսվում է ավարտին հասցնել 2026թ. հուլիսին:
5. 2026թ. հունիսի 26-ին «Շտիգեն» ՍՊԸ-ն և Shandong Hi-Speed Group-ը ստորագրել են էլեկտրամեքենաների լիցքավորիչների ազգային ցանցի կառուցման վերաբերյալ շրջանակային համագործակցության համաձայնագիր: Համագործակցության

շրջանակներում նախատեսվում է կատարել ներդրումներ՝ մինչև 12 մլն ԱՄՆ դոլարի չափով:

Գ. Փոփոխություններ կառավարման մարմինների կազմում

Ընկերությունը սույնով լրացուցիչ ներկայացնում է կառավարման մարմինների կազմի՝ նախկինում չբացահայտված հետևյալ էական փաստերը.

6. 2025թ. օգոստոս ամսից տեղի է ունեցել Ընկերության ֆինանսական տնօրենի փոփոխություն: Ընկերության ներկայիս ֆինանսական տնօրենն է հանդիսանում Սերգեյ Մարությանը:
7. Ընկերության գործադիր կազմի անդամ, ՄՌԿ-ի և կորպորատիվ մշակույթի ղեկավար Լեյլա Առաքելյանը 2025թ. սեպտեմբերի 1-ից այլևս չի աշխատում «Շտիգեն» ՍՊԸ-ում: